

4816

ՀՈՐ

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ

ԱԻԵՏ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ



معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۱۶ ربیع الآخر ۳۱۷ و  
۱۱ اغستوس ۳۱۵ تاریخی و ۳۲۴ نومرولی وخصتنامه سیله  
شمر اولمشدر

مصارفی آمریقان مسیونر شرکتی طرفندن تسویه اولندوق  
طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1899

284

Ե-93

284  
7-93

ՀՈՐ



# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԱԻԵՏ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՑ



معارف عمومیہ نظارت جلیلہ سنک ۱۶ ربیع الآخر ۱۳۱۷ و ۱۱ اغستوس  
۳۱۵ تاریخلی و ۳۲۴ نومرولی رخصتنامه سیلہ نشر اولمشدر  
مصارف آمریقان مسیوز شرکتی طرفندن تسویه اولنہرق طبع اولمشدر

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ա. ՅԱԿՈԲ ՊՕՅԱՃԵԱՆ

1899

2001

2010



ՆՈՐ

## ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ

ԱԻԵՏ. ԲՈՂՈՔԱԿԱՆԱՅ

Այս Քրիստոնէականը Մեծ Բրիտանիոյ, բաց ի Պետական Եկեղեցիէն, գրեթէ բոլոր Աւետարանական Եկեղեցեաց ներկայացուցիչներուն գործակցութեամբ պատրաստուած Քրիստոնէականին թարգմանութիւնն է: Ժողովական, Մեթոտական, Երեցական, Մկրտական եւ ուրիշ եկեղեցեաց երեւելի աստուածաբաններու միասնական աշխատութեան այս արդասիւքը յոյժ պատուական է ինքնին եւ միանգամայն գոհացուցիչ ապացոյց՝ Քրիստոնէական Հաւատոյ կենսական վարդապետութեանց մէջ բոլոր Աւետարանական Եկեղեցեաց էապէս համաձայն ըլլալուն:



39207-67

1. Հարցում. Ի՞նչ է Քրիստոնէական կրօնքը: Պատասխան. Այն կրօնքն է զոր հիմնեց Յիսուս Քրիստոս, մեր Տէրը եւ Փրկիչը, որ մեզի բերաւ Աստուծոյ եւ յաւիտենական կենաց լիութի գիտութիւնը:

2. Հ. Ի՞նչ գաղափար ունենալու ենք Աստուծոյ վրայ:

Պ. Աստուած է միակ յաւիտենական Հոգին, ամէն բանի Ստեղծիչը եւ Պահպանիչը: Սէր է ան, իմաստութեամբ ու զօրութեամբ անսահման, սրբութեամբ ու արդարութեամբ, ողորմութեամբ ու ճշմարտութեամբ կատարեալ:

3. Հ. Անոր ի՞նչ անուն տալ սորվեցուց մեզի Յիսուս:

Պ. «Հայր մեր որ երկինքն ես»:

52524-Ա.Է.



4. Հ. Ի՞նչ կը սորվինք այս Հայր անունէն :

Պ. Կը սորվինք թէ Աստուած իր պատկերին պէս ստեղծեց մեզ, թէ կը հոգայ մեզ իր իմաստուն նախախնամութեամբ, եւ թէ կը սիրէ մեզ շատ աւելի քան զոր կարող է երկրաւոր ոեւէ հայր :

5. Հ. Ի՞նչ կ'ըսէ Յիսուս իրեն համար :

Պ. Կ'ըսէ թէ Աստուծոյ Որդին է ինք, զոր Հայրն իր մեծ սիրով աշխարհ զրկեց՝ մեզ մեղքէ փրկելու համար :

6. Հ. Ի՞նչ է մեղքը :

Պ. Մեղքն է ոեւէ խորհուրդ կամ զգացում, խօսք կամ գործ, որ Աստուծոյ սուրբ Սօսքին հակառակ է կամ անոր պահանջման անհամաձայն :

7. Հ. Ըսէ համառօտիւ թէ ի՞նչ կը պահանջէ Աստուծոյ օրէնքը :

Պ. Կը պահանջէ սիրել զԱստուած մեր բոլոր սրտով եւ մեր ընկերը մեր անձին պէս :

8. Հ. Մենք մեղմով կարո՞ղ ենք այդպէս ընել :

Պ. Ոչ : Քանզի թէ եւ մարդս անմեղ ստեղծուեցաւ ի սկզբան, սակայն ինկաւ անհնազանդութեան մէջ, եւ յայնմհետէ ոչ ոք կարող է իր անձնական զօրութեամբ պահել Աստուծոյ օրէնքը :

9. Հ. Ի՞նչ են մեղաց հետեւանքները :

Պ. Մեղքն Աստուծոյն կը զատէ մարդը, կ'ապականէ անոր ընութիւնը, բազմապիսի ցաւերու եւ վիշտերու կ'ենթարկէ եւ, եթէ չզղջայ, յաւիտեանական մահուան կը մատնէ զայն :

10. Հ. Կրնա՞նք մենք մեղ ազատել մեղքէ եւ անոր հետեւանքներէն :

Պ. Ոչ երբեք : Քանզի անկարող ենք թէ՛ մեր սիրտերը սրբել, թէ՛ մեր յանցանքներուն համար հատուցում ընել :

11. Հ. Աստուծոյ Որդին ի՞նչպէս փրկեց իր ժողովուրդն իրենց մեղքերէն :

Պ. Մեր փրկութեան համար երկինքէն իջաւ, Հոգւով Սրբով մարմին առաւ Կոյս Մարիամէ, մարդացաւ եւ մեզի համար խաչուեցաւ Պոնտօսի Պիղատոսի օրով : Չարչարուեցաւ եւ թաղուեցաւ եւ երրորդ օրն յարութիւն առաւ ըստ Սուրբ Գրոց, եւ երկինք համբարձաւ եւ նստաւ Հօր Աստուծոյ աջ կողմը :

12. Հ. Ի՞նչ օգուտ կը քաղենք մենք Աստուծոյ Որդւոյն մարդեղութենէն :

Պ. Միջնորդ մը ունինք Աստուծոյ եւ մարդոց միջեւ, Մէկը որ իբրեւ Աստուած կը յայտնէ մեզի թէ ի՞նչ է Աստուած, եւ իբրեւ կատարեալ Մարդ կը ներկայացնէ մարդկութիւնն Աստուծոյ առջեւ :

13. Հ. Ուրիշ ի՞նչ օգուտ կը քաղենք մեր Տէրօջը երկրաւոր կեանքէն :

Պ. Անով ունինք եղբայրակից մարդ մը որ մեր տկարութիւններուն կարեկից է, ինչպէս եւ կատարեալ օրինակ ամենայնի որ պարտիմք ըլլալ :

14. Հ. Մեզի համար ի՞նչ բան կատարեց խաչին վրայ մեռնելով :

Պ. Ինքզինքն անարատ զո՞հ մատուցանելով



Աստուծոյ, լրացուց Աստուածային սրբութեան պահանջումները, քառութիւն ըրաւ բոլոր մեր մեղքերուն համար եւ կոտորեց մեղաց զօրութիւնը:

15. Հ. Խնչ կը սորվեցնէ մեզի Յիսուսի յարութիւնը:

Պ. Կը սորվեցնէ թէ Յիսուս կատարած է մեր փրկութեան գործը, թէ մահուան իշխանութիւնը վերջացած է եւ թէ, որովհետեւ ան կենդանի է, մենք ալ կենդանի պիտի ըլլանք:

16. Հ. Խնչ կը սորվինք անոր երկինք համբառնալէն:

Պ. Կը սորվինք թէ անոր անձովն ունինք մենք Հօրը քով Բարեխօս մը, որ «միշտ կենդանի է» մեզի համար «բարեխօս ըլլալու»:

17. Հ. Խնչ կը սորվինք անոր՝ Աստուծոյ աջ կողմը նստելէն:

Պ. Կը սորվինք թէ ան բարձրացած է իբրեւ մեր Գլուխը եւ Թագաւորը, որուն տրուած է ամէն իշխանութիւն երկնից մէջ ու երկրի վրայ:

18. Հ. Յիսուս Խնչպէս յառաջ կը վարէ տակաւին փրկութեան իր գործը:

Պ. Օրհնեալ Երրորդութեան երրորդ անձին, Սուրբ Հոգին, միշտով որ զրկուեցաւ Պենտեկոստէին օրը:

19. Հ. Խնչ է օրհնեալ Երրորդութեան խորհուրդը:

Պ. Սա է թէ Հայրը, Որդին եւ Հոգին Սուրբ, որոնց անունով կը մկրտուինք մենք, մէկ Աստուած են:

20. Հ. Խնչ ընելու ենք որ փրկուինք:

Պ. Մեր մեղքերուն համար ապաշխարելու եւ Տէր Յիսուս Քրիստոսի հաւատալու ենք:

21. Հ. Ապաշխարելն Խնչ է:

Պ. Ան որ ճշմարտապէս կ'ապաշխարէ իր մեղաց համար՝ ոչ միայն կը խոստովանի զանոնք ամօթով եւ տրտմութեամբ, այլ մանաւանդ կը թողու զանոնք եւ Աստուծոյ կը դառնայ թողութիւն գտնելու անկեղծ փափաքով եւ այլեւս չմեղանչելու հաստատ որոշումով:

22. Հ. Տէր Յիսուս Քրիստոսի հաւատալն Խնչ է:

Պ. Անոր ապաւինիլ իբրեւ մեր Վարդապետին, Փրկչին եւ Տէրոջը, բոլոր մեր վստահութիւնը գնելով Աստուծոյ շնորհաց վրայ Քրիստոսի ձեռքով:

23. Հ. Խնչպէս կարող կ'ըլլանք ապաշխարել ու հաւատալ:

Պ. Սուրբ Հոգին զաղտնի զօրութեամբը, որ իր շնորհովը կը գործէ մեր սիրտերուն մէջ եւ այդ նպատակով կը գործածէ նախախնամական միջոցներ եւ Աւետարանի պատգամը:

24. Հ. Խնչ օգուտ կը քաղենք երբ կ'ապաշխարենք ու կը հաւատանք:

Պ. Հաւատքով Քրիստոսի հետ միանալով՝ մեր մեղքերը կը ներուին Յիսուսի համար, մեր սիրտերը կը նորոգուին, եւ մենք կ'ըլլանք Աստուծոյ զաւակներ եւ Քրիստոսի ժառանգակիցներ:



25. Հ. Խնչպէս պիտի ցուցնենք թէ շնորհակալ ենք այդ մեծ բարիքներուն համար:

Պ. Զանալով Յիսուսի օրինակին հետեւիլ՝ մեր երկնաւոր Հօրը կամքն ընելով եւ ամէն նեղութեան մէջ անոր կամքին հնազանդելով:

26. Հ. Ո՞ւր կը գտնենք Աստուծոյ կամքն համառօտիւ յայտնուած:

Պ. Տասնաբանեային, այսինքն՝ Տասը Պատուիրաններուն մէջ, ինչպէս բացատրուեցան անոնք Յիսուս Քրիստոսէ:

27. Հ. Խնչ են Տասը Պատուիրանները:

Պ. Ինծմէ զատ ուրիշ աստուածներ չունենաւ:

Դուն քեզի կուռք չլինես, ոչ ալ վերը երկնից մէջ՝ կամ վարը երկրի վրայ՝ կամ երկրին տակի ջուրերուն մէջ եղած բաներուն մէկ նմանութիւնը. անոնց երկրպագութիւն չընես, ու զանոնք չպաշտես. ինչու որ ես քու Տէր Աստուածդ՝ նախանձոտ Աստուած եմ, որ կը հատուցանեմ հայրերուն անօրէնութիւնը որդւոցը վրայ՝ մինչեւ անոնց երրորդ ու չորրորդ ազգը՝ որ կ'ատեն զիս. եւ կ'ողորմիմ անոնց մինչեւ հազար ազգը՝ որ կը սիրեն զիս ու իմ պատուիրանքներս կը պահեն:

Տէրովը քու Աստուծոյդ անունը պարապ տեղը թէրա՞նչ չառնես. ինչու որ Տէրը՝ իր անունը պարապ տեղը թէրա՞նչ առնողը՝ անմեղ պիտի չսեպէ:

Հանգստութեան օրը միտքդ բեր՝ անիկա սուրբ պահելու համար: Վեց օր պիտի աշխատիս, ու բոլոր գործդ ընես. բայց եօթներորդ օրը՝ Տէրովը քու Աստուծոյդ հանգստութեան օրն է. ան օրը

գործ մը չգործես, ոչ դուն՝ ոչ քու որդիդ՝ ոչ քու աղջիկդ՝ ոչ քու ծառադ ու աղախինդ՝ ոչ քու անասունդ՝ ոչ ալ տանդ մէջ եղած օտարականդ. քանզի Տէրը վեց օրուան մէջ ըրաւ երկինքը ու երկիրը՝ ծովը ու բոլոր անոնց մէջ եղածները, եւ եօթներորդ օրը հանգստացաւ. անոր համար Տէրը օրհնեց հանգստութեան օրը՝ ու սրբեց զանիկա:

Պատուէ քու հայրդ ու մայրդ, որ քու օրերդ երկար ըլլան ան երկրին վրայ՝ որն որ քու Տէր Աստուածդ կու տայ քեզի:

Սպանութիւն մի ըներ:

Շնութիւն մի ըներ:

Գողութիւն մի ըներ:

Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ:

Քու դրացիիդ տանը մի ցանկար. քու դրացիիդ կնկանը՝ կամ անոր ծառային՝ կամ անոր աղախինն՝ կամ անոր եզին՝ կամ անոր իշուն՝ եւ քու դրացիիդ ամենեւին մէկ բանին մի ցանկար:

28. Հ. Մեր Տէրն ի՞նչպէս բացատրեց այս օրէնքը:

Պ. Ան սորվեցուց թէ օրէնքը կը վերաբերի նաեւ սրտին բաղձանքներուն, չարժանութիւններուն եւ դիտաւորութիւններուն, այնպէս որ չենք կրնար պահել զայն եթէ չսիրենք զԱստուած բոլոր մեր սրտով եւ մեր ընկերը մեր անձին պէս:

29. Հ. Հնազանդութեան կեանք մը վարելու մէջ մեզի օգնելու համար Աստուած ի՞նչ մասնաւոր միջոցներ տուած է մեզի:



Պ. Իր խօսքը, Աղօթք, խորհուրդները եւ սուրբերուն հաղորդութիւնը:

30. Հ. Ո՛ւր գրուած կը գտնենք Աստուծոյ խօսքը:

Պ. Աստուածաշունչին մէջ, որ Աստուծոյ յայտնութեան ներշնչեալ պատմութիւնն է մեզի տրուած իբրեւ կանոն հաւատոյ եւ վարուց:

31. Հ. Աղօթքն ի՞նչ է:

Պ. Աղօթքով կը հաղորդակցինք մեր երկնաւոր Հօրը հետ, կը խոստովանինք մեր մեղքերը, գոհութիւն կու տանք անոր բոլոր իր բարիքներուն համար, եւ Յիսուսի անունով կը խնդրենք այնպիսի բաներ զորոնք ինք խոստացած է:

32. Հ. Ի՞նչ է Տէրունական Աղօթքը:

Պ. Հայր մեր որ յերկնս, սուրբ եղիցի անուն քո.

Եկեսցէ արքայութիւն քո. եղիցին կամք քո որպէս յերկնս՝ և յերկրի.

Ձհաց մեր հանապազորդ տուր մեզ պսօր.

Եւ Թող մեզ զպարտիս մեր, որպէս և մեք Թողունք մերոց պարտապանաց.

Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա զմեզ ի չարէն. զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս: Ամէն:

Ով Հայր մեր որ երկնքն էս, քու անունդ սուրբ ըլլայ. քու Թագաւորութիւնդ գայ. քու կամքդ ըլլայ՝ ինչպէս որ երկնքը անանկ ալ երկրիս վրայ.

Մեր ամէն աւուր հացը պսօր մեզի տուր.

Եւ մեզի ներէ մեր պարտքերը՝ ինչպէս որ մենք ալ կը ներենք մեր պարտականեանքուն.

Ու մեզ փորձութեան մի տանիր, հապա չարէն մեզ ազատէ. ինչու որ քու կդ է Թագաւորութիւնը և զօրութիւնը ու փառքը յաւիտեանս: Ամէն:

33. Հ. Ի՞նչ է Կաթողիկէ (Ընդհանրական) Սուրբ Եկեղեցին:

Պ. Յիսուս Քրիստոսի հաւատացողներուն այն սուրբ ընկերութիւնն է զոր Յիսուս հիմնեց, որու միակ զուլան Յիսուս է եւ որու մէջ Յիսուս կը բնակի Սուրբ Հոգիին միջոցով, այնպէս որ Թէեւ շատ ճիւղերէ կը բաղկանայ, զանազան ձեւերով կը կազմաւորուի եւ աշխարհի մէջ ցրուուած է, տակաւին մէկ է Յիսուսի մէջ:

34. Հ. Մեր Տէրն ի՞նչ նպատակներով հիմնեց իր Եկեղեցին:

Պ. Միացուց իր ժողովուրդն այս տեսանելի եղբայրութեան մէջ Աստուծոյ երկրպագելու եւ Բանին ու խորհուրդներուն սպասաւորելու համար, փոխադարձ շինութեան համար, անհաւատարիմ անդամներ խրատելու կամ պատժելու համար եւ իր Թագաւորութիւնն յառաջացնելու համար:

35. Հ. Ի՞նչ է Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարիտ ճիւղին էական նշանը:

Պ. Կաթողիկէ Եկեղեցւոյ ճշմարիտ ճիւղին էական նշանն է Քրիստոսի ներկայութիւնը՝ անոր մէջ բնակող Հոգիին միջոցաւ, որ կը յայտնուի սուրբ կեանքով եւ սուրբ ընկերակցութեամբ:

36. Հ. Ի՞նչ է Ազատ Եկեղեցին:

Պ. Այնպիսի եկեղեցի մը՝ որ ուրիշ մը չճանչնար իբրեւ զուլս, բայց միայն զՅիսուս Քրիստոս: Հետեւապէս անոր օրէնքները մեկնելու եւ գործադրելու իր իրաւունքն ի գործ կը դնէ առանց



Պետութեան իշխանութեան կամ հսկողութեան ենթարկուելու :

37. Հ. Ի՞նչ է եկեղեցիին պարտականութիւնն հանդէպ Պետութեան :

Պ. Պետութեան բոլոր օրէնքներն յարգել եթէ հակառակ չեն Քրիստոսի վարդապետութեան, ազօթել ժողովրդին եւ մասնաւորապէս անոնց համար որ իշխանութեան գլուխ են, իշխաններուն եւ հպատակներուն միանգամայն սորվեցնել արդարութեան յաւիտեանական սկզբունքները եւ Քրիստոսի ոգւով տոգորել ազգը :

38. Հ. Ի՞նչ է Պետութեան պարտականութիւնն հանդէպ եկեղեցւոյն :

Պ. Պաշտպանել եկեղեցիին բոլոր ճիւղերուն եւ անոնց անհատ անդամներուն զԱստուած պաշտելու ազատութիւնը, եւ Քրիստոսի կրօնքն յառաջ տանելու այն ճիգերը՝ որոնք չեն դաշխր ուրիշներու քաղաքային իրաւունքներուն :

39. Հ. Ի՞նչ է քրիստոնեայ պաշտօնեան :

Պ. Քրիստոնեայ պաշտօնեան է անձ մը որ Աստուծոյն եւ եկեղեցիէն կոչուած է Բանին քարոզիչ եւ Քրիստոսի հօտին հովիւ ըլլալ :

40. Հ. Ի՞նչպէս կրնայ ապացուցուիլ այսպիսի պաշտօնէութեան մը վաւերականութիւնը :

Պ. Վաւերական պաշտօնէութեան վճռական ապացոյցն է եկեղեցւոյ Աստուածային Գլխուն հաւանութիւնը, որ կը յայտնուի մեղաւորներուն դարձով եւ Քրիստոսի մարմնին շինութեամբ :

41. Հ. Ի՞նչ են եկեղեցիին խորհուրդները :

Պ. Նուիրական ծէսեր են Տէր Յիսուսէ հաստատուած, որպէս զի տեսանելի նշաններով աւելի պարզեն Աւետարանին ներքին բարիքները, մեզի տան խոստացուած շնորհաց հաւաստիքը, եւ, երբ ուղիղ գործածուին, միջոց ըլլան այն շնորհաց մեր սրտերուն հաղորդուելուն :

42. Հ. Քանի՞ խորհուրդ կայ :

Պ. Միայն երկու. Մկրտութիւն եւ Տէրունական Ընթրիք :

43. Հ. Ի՞նչ է Մկրտութեան խորհրդին մէջ տեսանելի նշանը :

Պ. Ջուր, որով կը մկրտուի ոք Հօրը, Որդւոյն եւ Սուրբ Հոգւոյն անունով :

44. Հ. Ներքին Ի՞նչ բարիքներու նշանակ է այս :

Պ. Մեղաց լուացման եւ Սուրբ Հոգիով վերստին ծննդեան՝ բոլոր անոնց մէջ որ կ'ապաշխարեն ու կը հաւատան :

45. Հ. Ի՞նչ են արտաքին նշանները Տէրունական Ընթրիքին մէջ :

Պ. Հաց ու գինի, զորոնք Տէրը պատուիրեց տալ եւ բնդունիլ իր մահուանը մշտնջենական յիշատակի համար :

46. Հ. Հացը և գինին Ի՞նչ բանի նշանակ են :

Պ. Հացը նշանակ է մեր Տէրոջն Յիսուսի Քրիստոսի մարմնին, որով ապրեցաւ ու մեռաւ :



Գինին նշանակ է անոր արեան որ միանգամ խա-  
չին վրայ թափուեցաւ մեղքերու թողութեան հա-  
մար :

47. Հ. Ի՞նչ կ'ընդունին անոնք որոնք այս  
Խորհրդին հաղորդ կ'ըլլան զըմամբ եւ հա-  
ւատքով :

Պ. Հոգեւորապէս կը սնանին Քրիստոսով, իբրեւ  
հոգիին սնունդով, որով կը զօրանան եւ կը կազ-  
դուրուին կեանքի պարտականութիւններուն եւ  
փորձութիւններուն համար :

48. Հ. Քրիստոնեաներն ինչո՞ւ մէկտեղ կը  
մասնակցին Տէրունական Ընթրիքին :

Պ. Յուցնելու համար թէ իրենք մէկ են Քրիս-  
տոսով, հրապարակաւ դաւանելու համար իրենց  
հաւատքն ի նա, եւ իրարու եղբայրական սիրոյ  
գրաւական մը տալու համար :

49. Հ. Ի՞նչ է քրիստոնէին գլխաւոր մխի-  
թարութիւնն այս կեանքին մէջ :

Պ. Սա է թէ ինք Քրիստոսով կը վերաբերի Աս-  
տուծոյ, որ ամէն բաները բարիի գործակից կ'ընէ  
անոնց որ զինքը կը սիրեն :

50. Հ. Ի՞նչ յոյս ունինք մահուան հանդէպ :


Պ. Բոլորովին վստահ ենք թէ ամէնքը որ Քրիս-  
տոսով կը ննջեն՝ անոր հետ հանգստեան ու խա-  
ղաղութեան մէջ են, եւ թէ ինչպէս ան յարու-  
թիւն առաւ մեռելներէն, նոյնպէս ալ մենք յարու-  
թիւն պիտի առնենք եւ փառաւոր մարմիններ  
պիտի հագնինք :

51. Հ. Ի՞նչ ըսաւ Յիսուս իր երկրորդ-  
գալտեան վրայ :

Պ. Ըսաւ թէ այնպիսի ատեն մը որ միայն Աս-  
տուծոյ յայտնի է՝ ինք դարձեալ պիտի երեւի զօ-  
րութեամբ, որ փառաւորութի իր սուրբերուն մէջ  
եւ դատաւոր ըլլայ բոլոր մարդկային ազգին, եւ թէ  
մենք իր երեւման միշտ պատրաստ ըլլալու ենք :

52. Հ. Ի՞նչ է քրիստոնէին յոյսը հան-  
դերձեալին նկատմամբ :

Պ. Կը սպասենք յաւիտեանական կեանքին, ուր  
Քրիստոսով բոլոր փրկուածները զԱստուած պիտի  
տեսնեն եւ աշխարհի սկիզբէն իրենց համար պատ-  
րաստուած թաղաւորութիւնը պիտի ժառանգեն :





4816

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0031883



th